# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

## ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/50 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Ք. Սևան

20.07.2021թ.
ժամը 10:00

**Հանձնաժողովի նախագահ՝** Դոնարա Լալազարյան

**Անդամներ՝** Մարիաննա Առաքելյան

Վարդուհի Վարդանյան

Լուսինե Նիկողոսյան

**Գնումները համակարգող՝** Լանա Դավթյան

**ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/50 ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին**

(Դ. Լալազարյան)

1. Տեղեկություններ **www.armeps.am** կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/50 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկված գինը.
4. Տեղեկություններ բանակցությունների վերաբերյալ:
5. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/50 ծածկագրով ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
6. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հիմնավորումների մասին.
7. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. **Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Դ. Լալազարյան)

1.1 ԱՆ <<Սևանի հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ-ի կարիքների համար <<**Մետաղական դռան**>> ձեռքբերման նպատակով կազմակերպված ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/50 ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը |
|---|---|
| 1 | Էրիկ Սահակյան Ա/Ձ |
| 2 | <<Գեոթերմ>> ՍՊԸ |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. **ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/50 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

(Դ. Լալազարյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/50 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. **Յուրաքանչյուր մասնակիցների առաջարկված գները.**

(Դ. Լալազարյան)

3.1<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Չափաբաժին | Գնման ենթակա ապրանքի անվանումը | Գնման հայտով սահմանված գինը ՀՀ դրամով | Մասնակիցների անունները | Գնային առաջարկ ՀՀ դրամով | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք /ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումար/ | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Դուռ մետաղական | 165000 | Էրիկ Սահակյան Ա/Ձ | 299000 | | 299000 |
| | | | <<Գեոթերմ>> ՍՊԸ | 420000 | | 420000 |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

4. **Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.**

(Դ. Լալազարյան)

4.1 **1-ին չափաբաժնի** համար ներկայացված գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնման հայտով սահմանված գինին:

4.2 Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 40-րդ կետի 5-րդ ենթակետի հանձնաժողովը որոշեց վերը նշված չափաբաժնի համար ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով կասեցնել հանձնաժողովի նիստը և առաջարկված գների նվազեցման նպատակով, ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով հրավիրել նիստ, սույն թվականի հուլիսի 26-ին ժամը 11:00-ին ք. Սևան Կարմիր Բանակի 68 հասցեում, ֆինանսական բաժնի վարչական շենքում: Բանակցությունների վարման համար սահմանել ժամանակ 30 րոպե:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 6. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հիմնավորումների մասին.

(Դ. Լալազարյան)

6.1 Հայտերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ստացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 7. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Դ. Լալազարյան)

7.1 ԱՆ <<Սևանի հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ-ի ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/50 ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 26.07.2021թ.-ին ժամը 11:00, ք. Սևան Կարմիր Բանակի 68 հասցեում, ֆինանսական բաժնի վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

**Հանձնաժողովի նախագահ՝** Դ. Լալազարյան

**Անդամներ՝** Մ. Առաքելյան

Վ. Վարդանյան

Լ. Նիկողոսյան

**Գնումները համակարգող՝** Լ. Դավթյան